Կարգապահական գործ թիվ ԿԳ-25080

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԱՅԻԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ և զեկուցող անդամ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Արայիկ Ներսիսյանի,

քննության առնելով փաստաբան **Արայիկ Անդրանիկի Ներսիսյանին (այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (Հավատարմագիր՝ 117, արտոնագիր՝ ԱՀ-121) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

Փաստաբաններ Արտուշ Հակոբյանը, Գայանե Գևորգյանը, Թամարա Յայլոյանը, Արտյոմ Մանասյանը, Շահեն Իկիլիկյանը, Էդմոնդ Մուրադյանը, Հայկ Հարությունյանը, Արամայիս Հայրապետյանը, Աղասի Հունանյանը, Արինա Մեծոյանը **(այսուհետև՝ նաև Դիմողներ)**, դիմելով Պալատ, հայտնել են, որ «ԿՈՆՏՐԱ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՒՄԲ» ՍՊԸ-ի **(այսուհետ՝ Ընկերություն)** կողմից «Facebook» սոցիալական ցանցում հրապարակվել է գովազդային տեսահոլովակ:

Մասնավորապես, տեսահոլովակի շրջանակներում օգտագործվել է հետևյալ արտահայտությունը. *«Կոնտրա Լեգեմը Շիրակի մարզում է: Բայց հիշեք, մենք չենք եկել մարզ մարզային մակարդակի ծառայություններ մատուցելու: Մենք Երևանի բարձր ստանդարտը, մասնագիտական փորձն ու վստահելի իրավաբանական աջակցությունը բերել ենք այստեղ՝ Շիրակ...»:*

Նշվածի հաշվառմամբ, Դիմողները խնդրել են քննարկել կարգապահական պատասխանատվության հարցը:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն

Թիվ ԿԳ-25080-2-Ա
05.11.2025թ.

ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 04.09.2025 թվականին Դիմողներին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողները որևէ դիրքորոշում կամ ապացույց չեն ներկայացրել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը դիմումի և կից ներկայացված տեսահոլովակի ուսումնասիրության արդյունքներով բացատրություններ են պահանջվել փաստաբաններ Ալեքսանդր Սերգեյի Կոչուբաևից և Արայիկ Անդրանիկի Ներսիսյանից:

Փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևը 15.07.2025 թվականին ներկայացրել է բացատրություն՝ հայտնելով, որ որևէ կապ չունի Ընկերության կողմից հրապարակված տեսանյութի և դրանում արված հայտարարությունների հետ, պատասխանատու չէ սոցիալական ցանցում նշված օգտատիրոջ կողմից կատարված հայտարարությունների համար, չի հանդիսանում Ընկերության տնօրեն և դերակատարություն չունի Ընկերության ղեկավարման ու գործունեության հետ:

Փաստաբան Արայիկ Ներսիսյանը 24.07.2025 թվականին ներկայացված բացատրությամբ հայտնել է, որ Ընկերության գործադիր տնօրեն է հանդիսանում 21.12.2024 թվականից: Փաստաբանը հավելել է, որ Ընկերությունը 02.05.2024 թվականին «ՕՐԴԸՆԱՅԶ» ՍՊԸ-ի հետ կնքել է սոցիալական կայքերի կառավարման և վարման վերաբերյալ (SMM) ծառայությունների մատուցման պայմանագիր և վերջիններիս կողմից մատուցված ծառայությունների վերահսկողությունն իր տիրույթում չի գտնվում, իսկ Ընկերության սոցիալական կայքերի կառավարման հետ կապված բոլոր որոշումները կայացվում են ընկերության բաժնետիրոջ կողմից:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 04.09.2025 թվականին Փաստաբանին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Փաստաբանները որևէ դիրքորոշում կամ ապացույց չեն ներկայացրել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 04.08.2025թ. թիվ 235-Ա/ԿԳ-25080 որոշման հիման վրա փաստաբան Արայիկ Անդրանիկի Ներսիսյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ Օրենք**) 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետև՝ Կանոնագիրք**) 2.2.2, 5.1.2 և 5.2.1 (1, 3) ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

06.08.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից Հայկ Ծատուրյանին (**այսուհետ՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 06.10.2025թ. կազմել է եզրակացություն: Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-3-րդ կետերում նշված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 06.10.2025թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել՝ 05.11.2025թ., ժամը 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. «ԿՈՆՏՐԱ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՒՄԲ» ՍՊԸ-ի միակ մասնակիցը հանդիսանում է փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևը, իսկ տնօրեն՝ փաստաբան Արայիկ Ներսիսյանը: *Սույն փաստը հաստատվում է փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևի և Փաստաբանի բացատրություններով, ինչպես նաև Ընկերության վերաբերյալ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի քաղվածքով:*

2. «Facebock» սոցիալական ցանցում «Contra Legem» օգտատիրոջ էջը պատկանում է Ընկերությանը: *Սույն փաստը հաստատվում է Դիմողների և Փաստաբանի բացատրություններով, Դիմողի դիմումին կից ներկայացված Facebook» սոցիալական ցանցում «Contra Legem» օգտատիրոջ էջում առկա տեղեկություններով:*

3. «Facebock» սոցիալական ցանցում «Contra Legem» օգտատիրոջ էջում հրապարակել է գովազդային տեսահոլովակ, որտեղ օգտագործվել է հետևյալ արտահայտությունը. *«Կոնտրա Լեգեմը Շիրակի մարզում է: Բայց հիշեք, մենք չենք եկել մարզ մարզային մակարդակի ծառայություններ մատուցելու: Մենք Երևանի բարձր ստանդարտը, մասնագիտական փորձն ու վստահելի իրավաբանական աջակցությունը բերել ենք այստեղ՝ Շիրակ...»: Սույն փաստը կողմերն ընդունել են, ինչպես նաև դա հաստատվում է Դիմողների բացատրությամբ և դրան կից ներկայացված տեսահոլովակով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Արայիկ Ներսիսյանը Արցախի Հանրապետության փաստաբան է հանդիսանում 15.12.2022թ., իսկ ՀՀ փաստաբանների պալատում հավատարմագրվել է՝ 28.11.2023-28.11.2024թթ,
29.11.2024-29.11.2025թթ, և սույն տեղեկանքը տրամադրելու օրվա դրությամբ հավատարմագրված ժամանակահատվածում փաստաբանը չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Արայիկ Ներսիսյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2, 5.1.2 և 5.2.1 (1, 3) ենթակետերի պահանջների խախտման համար.

Օրենքի 17.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***այլ պետության փաստաբանը*** *Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական* ***գործունեությունն իրականացնում է նույն օրենքով****, փաստաբանների պալատի կանոնադրությամբ և* ***փաստաբանի վարքագծի կանոնագրքով սահմանված կարգով****, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***այլ պետության փաստաբանը Հայաստանի Հանրապետությունում գործում է իր պետության համապատասխան*** *փաստաբանական կառույցի* ***տված արտոնագրի հիման վրա*** *և պետք է փաստաբանների պալատի կանոնադրությամբ նախատեսված կարգով հավատարմագրվի փաստաբանների պալատում:*

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է ընկերության գործադիր մարմնի կողմից:*

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի համաձայն՝ *ընկերության գործադիր մարմինը՝*

ա) առանց լիազորագրի գործում է ընկերության անունից, այդ թվում՝ ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ.

Կանոնագրքի 1.4-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանական գրասենյակ է հանդիսանում՝ ի թիվս այլնի, նաև առևտրային կազմակերպությունը, որն իրականացնում է փաստաբանական գործունեություն և նրա կանոնադրական կապիտալում 100 տոկոս մասնակցություն ունի փաստաբանը, իսկ գործադիր մարմնի (գործադիր տնօրեն, տնօրեն, կոլեգիալ գործադիր մարմին) լիազորությունները իրականացնում է փաստաբանը(ները):*

Նշվածի կապակցությամբ Պալատի կարգապահական հանձնաժողովը 2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ ԿԳ-23029-2-Ա որոշմամբ արտահայտել է դիրքորոշում առ այն, որ «...Օրենքի և Կանոնագրքի կարգավորումներն իրենց բովանդակային առանձնահատկությունից ելնելով որոշակիորեն վերաբերում են և կիրառելի են ինչպես փաստաբանի, այնպես էլ Կանոնագրքի իմաստով փաստաբանական գրասենյակի կարգավիճակ ունեցող սուբյեկտներին, որոնք գործում են ի դեմս տնօրեն-փաստաբանի և փաստաբանական գործունեություն են իրականացնում օժանդակ անձնակազմի միջոցով:...»:

Տվյալ դեպքում, Հանձնաժողովն արձանագրում է, որ Ընկերության անունից հանդես է գալիս, իրավունքներ ու պարտականություններ է ձեռք բերում և ընթացիկ ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմնի ղեկավարը՝ տնօրեն-փաստաբան Արայիկ Անդրանիկի Ներսիսյանը, ով էլ պարտավոր է առաջնորդվել պահանջներ

վերահսկողություն Ընկերության՝ որպես փաստաբանական գրասենյակի կողմից և դրա անունից իրականացվող գործունեության, այդ թվում՝ գովազդային հրապարակումների նկատմամբ և հետևաբար պատասխանատվություն է կրում դրա համար:

Ա. Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 (1,3) ենթակետերի խախտման մասով.

Հանձնաժողովը գտնում է, որ Կանոնագրքի մեջբերված դրույթները բովանդակային առումով փոխկապակցված են, և Փաստաբանի կողմից Կանոնագրքի 5.2.1 ենթակետի խախտումը հանգեցնում է նաև 5.1.2 ենթակետի պահանջի խախտման:

Կանոնագրքի 5.1.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է մյուս բոլոր փաստաբաններին ընդունել որպես մասնագիտական գործընկերներ և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ:*

Կանոնագրքի 5.2.1 ենթակետի 1-ին և 3-րդ պարբերությունների համաձայն՝ փաստաբանը չպետք է՝

(1) թույլ տա այլ փաստաբանի պատիվը, արժանապատվությունը կամ համբավն արատավորող գործողություններ կամ արտահայտություններ (ներառյալ՝ չպետք է այլ փաստաբանին վիրավորական քննադատի).

...

(3) այլ փաստաբանի վստահորդի մոտ վարկաբեկի նրա փաստաբանին՝ բացասական իմաստով արտահայտվելով փաստաբանի վարձատրության պայմանների կամ մասնագիտական հմտությունների վերաբերյալ.

Կանոնագիրքը հստակ սահմանել է փաստաբանների միջև շփման նվազագույն կանոնները՝ այն է քաղաքավարի և հարգանքը միմյանց արժանապատվությունը և փաստաբանի համբավի նկատմամբ:

Փաստաբանների կողմից մեկը մյուսի նկատմամբ հարգալից վերաբերմունքի դրսևորումը ուղղակիորեն առնչվում է փաստաբանության ինստիտուտի հեղինակության և փաստաբանի դերի հասարակական ընկալման հետ:

Այլ փաստաբանի մասնագիտության, անձնավորության, գործնական համբավի նկատմամբ հարգանքը պետք է լինի յուրաքանչյուր փաստաբանին ուղղորդող կանոն, քանի որ նրա բարոյական պարտականությունն է փաստաբանի կոչման արժանապատվության և փաստաբանության հեղինակության մասին հոգալը:

Այսպիսով, Կանոնագրքի կանոնը՝ մյուս բոլոր փաստաբաններին որպես մասնագիտական աշխատակիցներ ընդունելու, նրանց նկատմամբ անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերելու և այլ փաստաբանի նկատմամբ նրա՝ որպես փաստաբանի արժանապատվությունը և համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ թույլ չտալու վերաբերյալ, փաստաբանական էթիկայի հիմնաքարն է, քանի որ չի կարող իր նկատմամբ **հարգանք ակնկալել այն կառույցը, որի անդամները, մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում միմյանց նկատմամբ չեն ցուցաբերում փոխադարձ հարգանք և կոռեկտություն:**

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համալիրների խորհրդի (CCBE-ի) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության

հիմնական սկզբունքների վերաբերյալ մեկնաբանությունների «դ» կետի համաձայն՝ *Փաստաբանը, դրպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակազրկել ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը:*

Սույն գործում առկա ապացույցներով հիմնավորվում է այն հանգամանքը, որ «Facebook» սոցիալական ցանցում «Contra Legem» օգտատիրոջ էջում հրապարակել է գովազդային տեսահոլովակ, որտեղ օգտագործվել է հետևյալ արտահայտությունը. *«Կոնտրա Լեգեմը Շիրակի մարզում է: Բայց հիշեք, մենք չենք եկել մարզ մարզային մակարդակի ծառայություններ մատուցելու: Մենք Երևանի բարձր ստանդարտը, մասնագիտական փորձն ու վստահելի իրավաբանական աջակցությունը բերել ենք այստեղ՝ Շիրակ...»*, ինչը որևէ կերպ չի կարող ներառվել «հարգալից վերաբերմունք» կատեգորիայի շրջանակներում: Ավելին՝ նշված արտահայտությունը ինքնին վիրավորական կհամարվեր նաև Պատասխանողի համար, եթե ուղղված լիներ իրեն:

Նշված արտահայտությունը, Հանձնաժողովի գնահատմամբ, հանդիսանում է փաստաբանի պատիվը, արժանապատվությունն ու համբավը արատավորող, և ընդունելի չէ փոխադարձ հարգանքի վրա կառուցված հարաբերություններում փաստաբանի բարձր կոչումը կրող անձանց միջև՝ խախտելով Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 (1,3) ենթակետերի պահանջները:

Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թվականի ապրիլի 5-ի թիվ ՍԴՈ-1263 որոշմամբ դատարանը նշել է. *«ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ի տարբերություն 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, որի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթով սահմանված էր իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս, որի 1-ին նախադասությամբ ամրագրված է հետևյալ դրույթը. «Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանական գործունեությունը»: Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները* ***սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրվող ինստիտուտի դերը»:***

Այսպիսով, Պատասխանողի նշված արտահայտությունները, Հանձնաժողովի գնահատմամբ, հանդիսանում են Դիմողների՝ որպես փաստաբանի ***պատիվը և արժանապատվությունը արատավորող և ընդունելի չեն փոխադարձ հարգանքի վրա կառուցված հարաբերություններում փաստաբանի բարձր կոչումը կրող***

անձանց միջև: *Այդպիսով Փաստաբանը նաև խախտել է Դիմողին* ***որպես մասնագիտական աշխատակից ընդունելու նրա հանդեպ անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերելու՝ Կանոնագրքով սահմանված իրենց պարտականությունը:***

Բ. Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտման մասով.

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:*

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 16 (2013) կարծիքի 25-րդ կետի համաձայն՝ ... պրոֆեսիոնալ գործընկերների նկատմամբ հարգանքի. օրենքի գերակայության և արդարադատության արդար իրականացման հարգանքի՝ Փաստաբանների և իրավաբանների միությունների եվրոպական խորհրդի «Եվրոպայում իրավաբանի մասնագիտության հիմնարար սկզբունքների մասին» խարտիայում սահմանված սկզբունքներով պահանջվում է խուսափել գործընկերների, առանձին դատավորների և դատարանի ընթացակարգերի ու որոշումների վիրավորական քննադատությունից:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Փաստաբանի, այդ թվում Պալատի կողմից հավատարմագրված այլ պետության փաստաբանի, վարքի նկատմամբ հարաբերականորեն խիստ սահմանափակումները պայմանավորված են փաստաբանի մասնագիտության առանձնահատուկ բնույթով և հանրային բարձր կարգավիճակով, որը պայմանավորված է փաստաբանության՝ որպես իրավապաշտպան գործունեության մեծ կարևորությամբ: Փաստաբանը հանդիսանում է հասարակության հատուկ սուբյեկտ, ով ստանձնել է իր առանձնահատուկ դերը՝ իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի շնորհիվ և որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող սուբյեկտ կոչված է նպաստելու արդարադատության իրականացմանը: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն վստահորդների հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության ընկալման համար:

Ըստ այդմ, Օրենքով և Փաստաբանի վարքագծի կանոնագրքով սահմանված պարտականությունների շարքում առանձնակի նշանակություն ունի նաև փաստաբանական համայնքի անդամների միջև միմյանց նկատմամբ մասնագիտական հարգանքը, որը փոխկապակցվում է նաև վստահորդի՝ իր այլ փաստաբանին վարկաբեկելու և նրա ծառայություններից հրաժարվելուն ստահորդին

դրդելու վարքաձիծը:

Այս համատեքստում, նշվածը սերտորեն փոխկապակցված է Կանոնագրքի 2.2.2 ենթակետի կարգավորման հետ, որով փաստաբանի վրա դրվում է համակողմանի պարտականություն իր գործունեության բոլոր բնագավառներում նպաստել փաստաբանության մասնագիտական բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը: Սույն պարտականությունն ունի ինչպես պոզիտիվ, այնպես էլ նեգատիվ դրսևորում: Առաջին դեպքում ենթադրվում է փաստաբանի կողմից որոշակի ակտիվ գործողությունների կատարում սեփական մասնագիտական և անձնական վարկանիշի բարձրացման ուղղությամբ՝ այդպիսով իր նպաստը բերելով փաստաբանի մասնագիտության հանրային վարկանիշի բարձրացմանը: Նեգատիվ պարտականությունը փաստաբանի պատշաճ վարքագծի նվազագույն շեմն է, երբ փաստաբանից պահանջվում է առնվազն չկատարել հակաօրինական և փաստաբանի մասնագիտության հանրային վարկը խաթարող գործողություն կամ անգործություն:

Փաստաբանի՝ որպես անհատի գործունեությունը հասարակության կողմից ասոցացվում է փաստաբանի ինստիտուտի հետ ընդհանրապես, ուստի և փաստաբանն իր առօրյա գործունեության իրականացման ընթացքում պետք է դրևսորի այնպիսի վարքագիծ, որը կնպաստի փաստաբանի կոչման և առաքելության նկատմամբ հարգանքի և վստահության բարձրացմանը, ինչը փաստաբանի բարոյական պարտավորությունն է: Փաստաբանի օրինակելի վարքագծի կարևորագույն դրսևորումներից է իր գործընկերների և այլ անձանց անձի, արժանապատվության և համբավի նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելը, միջանձնային քաղաքավարի վարվեցողությունը:

Ընդ որում, հարկ է նշել, որ Օրենքի և Կանոնագրքի կարգավորումներն իրենց էությամբ վերաբերելի են ոչ միայն փաստաբանի, այնպես էլ Կանոնագրքի իմաստով փաստաբանական գրասենյակի կարգավիճակ ունեցող սուբյեկտների նկատմամբ: Ըստ այդմ, առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում նաև փաստաբանական գրասենյակի գործադիր մարմնի ղեկավարի՝ տնօրեն-փաստաբանի վարքագիծը, ով ապահովում է գրասենյակի ընդհանուր ղեկավարումը և դրա անունից հանդես է գալիս տարատեսակ իրավահարաբերություններում:

Հանձնաժողովը եզրակացնում է, որ Փաստաբանի վերը նշված վարքագիծն անհարիր է իրավական պետությունում իրավապաշտպան գործառույթ իրականացնող անձին և չի նպաստում փաստաբանության ինստիտուտի և փաստաբանի մասնագիտության հանրային հեղինակության ամրապնդմանը, փոխարենը՝ ստվերում է այն:

Պատասխանողն իրեն պատկանող «Facebook» սոցիալական ցանցում «Contra Legem» օգտատիրոջ էջում հրապարակված գովազդային տեսահոլովակում օգտագործված արտահայտություններով կասկածի տակ է դրել փաստաբանի մասնագիտական և հանրային հեղինակությունը, որը հարիր չէ փաստաբանին:

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, հատկապես նաև Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրությունների ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի

19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.2.2, 5.1.2 և 5.2.1 (1, 3) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշները:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը:

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Կանոնակարգի 8.4.2 ենթակետի համաձայն՝ *Այն դեպքում, երբ այլ պետության փաստաբանի կողմից առաջին անգամ թույլ տրված ոչ էական խախտումը հնարավոր է վերացնել և այն էական վնաս չի պատճառել վստահորդին, Պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է* ***նկատողություն հայտարարել*** *այլ պետության փաստաբանին:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ Փաստաբանի մոտ առկա տույժերը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Փաստաբանը նախկինում չի ունեցել կարգապահական տույժ, և այն հանգամանքը, որ Փաստաբանի գործողությունները չեն առնչվում վստահորդի հետ հարաբերություններին, Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործով Փաստաբանի նկատմամբ պետք է կիրառել ամենամեղմ՝ «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի և 39.10.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Արայիկ Անդրանիկի Ներսիսյանի (Հավատարմագիր՝ 117, արտոնագիր՝ ԱՀ-121) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ

«նկատողություն», «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2, 5.1.2 և 5.2.1 (1, 3) ենթակետերի *պահանջների՝ սույն որոշմամբ արձանագրված խախտման համար:*

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ Տաթևիկ Շալջյան

Թիվ ԿԳ-25080-2-Ա
05 նոյեմբերի 2025թ.
ք.Երևան